



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
Էլփոստ՝ info@aybschool.am
Կայք՝ www.aybschool.am

Մաթեմատիկայի ուսուցիչ

[«Այբ» դպրոց](#) | Երկարաժամկետ

[Թբիլիսյան խճ. 11/11](#), Երևան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ փետրվարի 20

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **բոլոր այն ուսուցիչները**, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ունեն բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում (մագիստրոսի աստիճանը ցանկալի է).
- լիարժեք տիրապետում են իրենց մասնագիտությանը, մշտապես կատարելագործում իրենց մասնագիտական և մանկավարժական կարողությունները՝ հետևելով մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում.
- տիրապետում են երեխաների հետ աշխատելու հմտություններին.
- մանկավարժական գործունեություն իրականացնելիս ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում, վերլուծական մտածելակերպ և չեն խուսափում նորարարություններից.
- ուսուցչությունը համարում են իրենց կոչումը, իսկ կրթությունը՝ ոչ միայն անձ ձևավորելու, այլև նաև Հայաստանի ապագան կերտելու գրավական.
- ունեն հաղորդակցության և ժամանակի կառավարման հմտություններ.
- ծանոթ են ուսուցման ժամանակակից մեթոդներին.
- տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft Office և այլն).
- ունեն անգլերենի լավ իմացություն (գրավոր և բանավոր).
- դասավանդման փորձը խիստ ցանկալի է:

Դիմելու կարգ

Բոլոր համապատասխան թեկնածուներին խնդրում ենք vacancy@aybschool.am էլ. հասցեին ուղարկել ստորև ներկայացված նյութերը.

1. ինքնակենսագրություն (CV),
2. նամակ-հիմնավորում «Ինչու եմ ուզում դառնալ «Այբ»-ում ուսուցիչ» թեմայով (մեկ էջից ոչ ավել),

3. դասավանդման, դասարանի հետ աշխատանքի որևէ մշակում սեփական մոտեցումների ու առաջնահերթությունների **հակիրճ** ներկայացում (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Խնդրում ենք փաստաթղթերը կցել նամակին և նամակի վերնագրում նշել Ձեր անուն-ազգանունը:
Կդիտարկվեն դիմումների միայն ամբողջական փաթեթները:

Հայտերն ընդունվում են մինչև 2017 թ. փետրվարի 20-ը ներառյալ: Նախնական ընտրություն անցած թեկնածուների հետ ծանոթանալու և մրցույթի հետագա փուլերը կազմակերպելու համար կկապվենք անձամբ՝ փաստաթղթերի ստացմանը զուգընթաց: Խնդրում ենք չզանգահարել:

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում՝ ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալու 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: